

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՅԵՐԵՆԻ ԲԱԴԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱՐԵՐՅԱԼ

Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչ,  
բանասիրական գիտությունների դոկտոր

Լեզվաշինարարության խնդիրներից ամենահրատապը, թերևս, նորաբանությունների հարցն է: Դա վերաբերում է ամեն մի կենդանի լեզվի, ուստի նաև ժամանակակից հայերենին: Դա է պատճառը, որ այդ ուղղությամբ մեզանում թե՛ անցյալում և թե՛ մեր ժամանակներում բուռն վեճեր են ծավալվել, զանազան կարծիքներ բախվել: Մեր պարբերական մամուլում ու գիտական հանդեսներում այդ հարցը վերարծարծվեց վերջին 2—3 տարում ևս: Եղան ինչպես ճիշտ, նույնպես և սխալ ու ծայրահեղ մոտեցումներ:

Տվյալ դեպքում մենք նպատակ չունենք ո՛չ նորաբանությունների ընդհանուր տեսությունը հանգամանորեն շարադրելու, ո՛չ էլ մանավանդ վեճերի ընթացքում հանդես բերված բազմազան կարծիքները քննելու, գնահատելու և ամփոփելու: Դրանք շատ կարևոր են, սակայն տեղական ու մանրակրկիտ աշխատանք են պահանջում:

Այստեղ խիստ համառոտակի կանգ կառնենք բառային նորաբանությունների հետ կապված մի երկու իրողությունների վրա՝ ինչպես որ հասկանում ու պատկերացնում ենք դրանք:

Հանրահայտ է, որ լեզվի կառուցվածքային բաղադրիչներից ամենազգալունը բառապաշարն է: Սա է, որ ամենից շատ է ենթարկվում, այսպես կոչված, արտալեզվյան գործոնների ազդեցությանը: Դրա հիման վրա էլ բառապաշարում հանդես են գալիս ավելի շատ փոփոխություններ՝ ի տարբերություն լեզվական համակարգի մյուս բաղադրիչների: Ամենալայն առումով՝ հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները արտացոլում են գտնում բառապաշարի մեջ: Նորություններն ստանում են բառային նոր արտահայտություններ, տեղի տվողն ու հնացածն էլ համապատասխանաբար տեղի է տալիս նաև ըստ լեզվական արտահայտության: Եվ բառապաշարը անընդհատ նորոգվում, հարստանում է: Այդուհանդերձ՝ կենդանի ու հարատևող լեզվի բառապաշարը միշտ էլ պահպանում է իր ինքնությունը, իր բնորոշ դեմքը՝ խարսխված լինելով անհիշելի ժամանակներից եկող սեփական խոր հիմքերի վրա:

Բառապաշարի տեղաշարժերը արտահայտվում են նոր բառերի գործածությամբ, եղած ուրոշ բառերի վերափոխմամբ, հնացածների ու իրենց դարն ապրածների մոռացությամբ: Նորաբանություններն ընդգրկում են առաջին երկու իրողությունները:

Հոկտեմբերյան հեղափոխությունից ու սովետական կարգերի հաստատումից հետո նոր դարադլուի բացվեց շատ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի համար: Ազգային վերածնունդը, հասարակական նոր հարաբերությունները, տնտեսական, դիտական, մշակութային մեծ առաջընթացը հսկայական փոփոխություններ առաջացրին Սովետական Հայաստանի բնակչության կենցաղում ու դիտակցության մեջ: Ժամանակակից արևելահայ աշխարհաբարը լանաչվեց պետական լեզու: Նրա մշակումն ու զարգացումը սկսեցին ընթանալ պետական հովանավորության ներքո: Ռուսերենի բուռն լեզվաշինարարությունը օրինակ դարձավ և մեր լեզվի համար: Ավելի ու ավելի ընդլայնվող մասսայական դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցը, դիտական օջախները, մամուլը, ռադիոն, թատրոնները, վիթխարի ծավալում բառարան հայերենից ռուսերենի» (1911 թ.) և «Ժամանակակից հայոց լեզվի մշակմանն ու զարգացմանը, այլ և նրա ժողովրդականացմանն ու լայն տարածմանը աշխատավորական զանգվածների մեջ: Մեր գրական լեզվում հղկվեցին ու կայունացան շատ իրակություններ, ուրիշները ծավալում գտան և այլն: Շատ բան փոխվեց նրա բառապաշարում. այն հարստացավ, ճոխացավ, շատ բառիմաստներ բյուրեղացման հասան և այլն: Այժմ կարող ենք նշել, որ ժամանակակից գրական հայերենը իր մշակվածությամբ ու հարստությամբ, ամենաբազմազան գաղափարներ արտահայտելու հնարավորություններով ետ չի մնում աշխարհի զարգացած լեզուներից: Էլ ի՞նչ խոսք կարող է լինել նրա արդի և նախասովետական շրջանի համեմատության առումով: Դեռ լրիվ չափով հաշվված չէ ժամանակակից գրական հայերենի ամբողջական բառապաշարը (այն, իհարկե, առաջիկայում պարզ կլինի՝ ըստ պատրաստվող բառարանների): Սակայն այդ տեսակետից իբրև նմուշ կարևոր ենք համարում հիշատակել այսպիսի մի դուգահեռ: Համեմատելով Հ. Դադբաշյանի «Լիակատար բառարան հայերենից ռուսերենի» (1911 թ.) և «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» (1969 թ.) միայն Ա տառով սկսվող բառերի ցանկը՝ նկատում ենք, որ հիշյալ սահմաններում վերջինիս ընդգրկած բառերը առաջինի ընդգրկածների գրեթե կրկնապատիկն են: Զխորանալով մանրամասնների մեջ՝ նշենք, սակայն, որ ո՛չ առաջինն է լիակատար և ո՛չ էլ վերջինն է առանց մնացորդի ընդգրկում ժամանակակից հայերենի բոլոր բառերը: Այդուհանդերձ չի կարելի չնկատել, որ այս մասնակի դուգահեռը ինքնին խոսում է մեր նոր գրական լեզվի բառապաշարի ակնհայտ ընդլայնման մասին:

Հենց սովետական շրջանում մեր գրական լեզվի բառապաշարում երևան են եկել բազմահազար նոր բառեր, որոնց զգալի մասը առօրյա լայն կիրառություն ունի: Ո՞ւմ հայտնի չեն այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ, առաջփաշում, շաբաթացան, սերմագտիչ, տրակտոր, կոմբայն, կոլտնտեսություն, սոցմրցում, ժամկետ, պահածո, տարկետում, օդակավար, գերակատարում, հաստոց, հաստիֆ, ելույթ, բրիգադ, բրիգադիր, ականանետ, ականոս, առանցքակալ, կինո, ռադիո, հեռուստացույց, տիեզերանավ, տիեզերագնաց<sup>1</sup>, կիսահաղորդիչ և այլն, և այլն: Սրանցից յուրաքանչյուրը մեր կյանքի մեջ մուտք գործած նոր առարկաների ու երևույթների հետ կապված հասկացությունների բառային արտահայտիչն է: Այս և սրանց նման բազմաթիվ այլ բառեր, որպես նորարանություններ, մեր լեզվի մեջ հանդես են եկել կյանքի թելադրանքով,

<sup>1</sup> Ավելի ճիշտ կլինի տիեզերանավորդ, ինչպես որ հենում ունեցել ենք արգոնավորդ:

բառագործածության անհրաժեշտության հիման վրա: Բայց ինչպե՞ս և որտեղի՞ց: Սրանք, իհարկե, մեր գրական լեզվի որոշակի կացութաշրջանի համար նոր բառեր են, սակայն, առհասարակ լեզվական ատաղձի առումով նոր չեն: Շատ վաղուց նկատված է, որ լեզուների մեջ այլևս արմատագոյացում տեղի չի ունենում: Ուրեմն բառապաշարի ընդլայնման համար նրանց տրամադրության տակ է մնում արդեն գոյություն ունեցող ատաղձը կամ պատրաստի նյութը:

Այս տեսանկյունից մոտենալով վերը բերված օրինակներին՝ դժվար չէ նկատել, որ դրանց հիմնական մասը կազմված է հայոց լեզվի սեփական (կամ հնագույն ժամանակներից սեփականված) նյութով, ինչպես՝ առաջաշում, շարճացան, սերմագտիչ, ժամկետ, պանածո, տարկետում, օղակավոր, գերակատարում, հաստոց, հաստիք, ելույթ, ակնանետ, ակնոճ, առանցքակալ, հեռուստացույց, տիեզերանավ, տիեզերագնաց, կիսահաղորդիչ, իսկ մի մասն էլ եկամուտ է, ինչպես՝ տրակտոր, կոմբայն, բրիգադ, բրիգադիր, կինո, ռադիո: Կամ էլ արդյունք են նոր (կամ համեմատաբար նոր) մուտք գործած տարրի ու լեզվում եղածի համադրման, ինչպես՝ կոլտեսություն (=կոլեկտիվ տնտեսություն), սոցմրցում (=սոցիալիստական մրցում) և այլն:

Այստեղ գործ ունենք այն հիմնական ուղիների ու միջոցների հետ, որոնցով երևան են գալիս նոր բառեր լեզվի բառապաշարում: Դրանցից առաջինը և առավել կարևորը ներքին ուղին է, երբ լեզուն ունեցած նյութով ու բառակազմական միջոցներով (բառաբարդացում, ածանցում, հապավում) կազմում է զանազան նոր բառեր: Այս դեպքում և՛ նյութը, և՛ կազմության կաղապարները տվյալ լեզվինն են: Սակայն պատահում է և այնպես, որ սեփական նյութը կաղապարվում է ուրիշ լեզվի կաղապարների ընդօրինակումով: Մեր ժամանակներում այդ տեսակետից որոշակի է ռուսաց լեզվի դերը:

Մյուսը արտաքին ուղին է՝ փոխառությունների ուղին, երբ լեզուն փոխ է առնում պատրաստի բառեր:

Այսպիսով, ընդհուպ մոտեցանք փոխառությունների հարցին, որը վիճաբանության ենթակա կենտրոնական հարցերից է: Իսկ ավելի որոշակի ասած՝ դա, ինչպես ընդունված է անվանել, միջազգային բառերի փոխառման և օգտագործման հարցն է: Փոխառությունը, որպես բառապաշարի հարստացման միջոց, լեզուների մեջ հանդես եկող վաղուց ճանաչված և ընդունված իրողություն է: Դրանից հայերենը զերծ չի եղել և՛ անցյալում, և՛ ոչ էլ մեկուսի է ներկայումս: Վերը, նորաբանությունների նմուշներ հիշատակելիս, նշեցինք նաև փոխառյալ որոշ օրինակներ: Իհարկե, կարելի է բերել նաև ուրիշները, այդ թվում և այնպիսիները, որոնք գալիս են դեռ նախասովետական շրջանից, մեծ մասամբ ռուսերենի միջնորդությամբ, ինչպես՝ կոմունիզմ, սոցիալիզմ, ֆիզիկա, մաթեմատիկա, ատոմ, պրոտոն, դեկան, պրոֆեսոր, դոկտոր, դոցենտ, կոմիտե, կոնֆերանս, բանկ, չեկ, տրեստ, տանկ և այլն՝ գործածության տարբեր չափերով ու տարբեր ոլորտներով: Կարելի է խոսել այն մասին, թե գործառնական ո՞ր ոճի դեպքում են օգտագործվում այս բառերն ու տերմինները, սակայն ոչ ոք չի կարող ժխտել ընդհանրապես սրանց գործածությունը մեր այսօրվա լեզվի մեջ: Բայց հարցն այն է, թե առհասարակ որպես միջազգային ներկայացող բոլոր բառերն ու տերմինները և առանց վերապահության՝ պետք է ներառել, այս դեպքում միմիայն արտաքին ուղին՝ պետք է ընթանալ՝ բավարարվելով միայն պատրաստի նյութի ներսումով, թե՞ պետք է օգտվել լեզվի սեփական ներքին հնարավորություններից, աշխատանք տանել

բառակաղմության կամ եղածներից ընտրություն կատարելու և վերաիմաստավորելու ուղղությամբ:

Այս դեպքում չեն կարող օգտակար լինել ո՛չ հանդիպող օտար բոլոր բառերի անվերապահ ներառումը, ո՛չ էլ ծայրահեղ մաքրամոլությունը: Պետք է հաշվի նստել զործածության անհրաժեշտության, նպատակահարմարության և չափի հետ: Այս կարևոր խնդրում կողմնորոշվելու գործում ևս մեզ օգնության են դալիս մարքսիզմի կլասիկների ցուցումները, որոնք արտահայտվել են իրենց ժամանակին, բայց այսօր էլ հնչում են թարմ ու արդիական:

Հիշենք, որ Վ. Ի. Լենինը «Ռուսաց լեզուն մաքրելու մասին» իր փոքրածավալ, սակայն խիստ մեծարժեք հոդվածում բողոքի հզոր ձայն է բարձրացրել օտար բառերի՝ առանց անհրաժեշտության, անհարկի, ինչպես և սխալ օգտագործման դեմ: Նա գրել է՝ «Ռուսաց լեզուն մենք փչացնում ենք: Օտար բառերը դործ ենք ածում առանց անհրաժեշտության: Այդ բառերը սխալ ենք գործածում: Ինչի՞ համար ասել «դեֆեկտներ», երբ կարելի է ասել թերություններ կամ պակասություններ կամ բացեր:... Եթե վերջերս կարդալ սովորողին ներկի է օտար բառեր գործածել իբրև նորություն, ապա գրականագետներին այդ ներել չի կարելի: Արդյոք ժամանակը չէ՞, որ մենք պատերազմ հայտարարենք օտար բառերի առանց անհրաժեշտության գործածությանը<sup>2</sup>: Ասված է պարզ ու մեկին՝ պետք է մերժել օտար բառերի անհարկի հործածությունները: Այդ նշանակում է, որ օտար բառերը կարելի է գործածել միմիայն անհրաժեշտության դեպքում:

Հիշենք նաև, որ Ֆր. էնգելսը, մի առիթով անդրադառնալով օտար բառերին, ընդգծել է, որ ինքը դուրս գցելով ավելորդները, պահպանել է՝ այնպիսիները (մեծ մասամբ ընդհանուր գործածություն ունեցող գիտատեխնիկական տերմիններ), որոնք թարգմանության չեն ենթարկվում կամ թարգմանության դեպքում էլ իմաստով աղավաղվում են<sup>3</sup>: Ուրեմն, ըստ Ֆր. էնգելսի, անհրաժեշտ է գործածել այն օտար բառը, որի թարգմանությունը հնարավոր չէ կամ աղավաղում է իմաստը:

Այս ցուցումները, որ հաճախ են վկայակոչվում մասնագիտական գրականության մեջ, և՛ կողմնորոշող ընդհանուր-տեսական դրույթներ են, և՛ միաժամանակ, գործնական ուղենիշներ:

Այո՞, օտար բառերը կարելի է գործածել միայն անհրաժեշտության դեպքում, դրանց ճիշտ համարժեքներ չունենալու կամ սեփական միջոցներով հաջողությամբ ստեղծել չկարողանալու դեպքում: Լեզուն չպետք է խճողել անհարկի օտարաբանություններով: Մենք ընդգծում ենք, որ այն, ինչ կարելի է առանց իմաստի խաթարման սեփականով արտահայտել, երբեք չպետք է փոխարինել օտարով, քանի որ այդ դեպքում անհրաժեշտություն չկա:

Եվ, իրոք, այսօր ո՞ւմ մտքով կարող է անցնել, օրինակ, ուսանող-ը փոխարինել ստուղենտ-ով, մայք-ը՝ տրոտուար-ով, հեռափոսը՝ տելեֆոն-ով, քանգարադ-ը՝ մուգեյ-ով և այլն, թեև այսօր համապատասխան ոչ հայերեն համարժեքները գործածություն ունեն աշխարհի շատ և շատ լեզուներում, կամ էլ որոշ ժամանակ գործածվել են նաև հայերենում: Գուցե և վեճեր էլ են եղել դրանց շուրջը, բայց փաստ է, որ բերված հայերեն բառերը մեր լեզվում այժմ

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 375:

3 Յէս. Կ. Մարքս և Փ. Էնգելս, Сочинения, հ. 19, էջ 322:

հաստատուն տեղ ունեն և իրենց արտահայտած իմաստներով հաջողությամբ ծառայում են հայ ժողովրդին:

Եվ, ճիշտ հակառակը, ու՛մ է հաջողվել տրոլեյբուս-ը, տրամվայ-ը, արակ-տոր-ը, ցեմենտ-ը, բետոն-ը, շոկոլադ-ը և այլն թարգմանել հայերեն կամ ղրանց դիմաց դնել որևէ այլ բառ: Այդպիսի անհրաժեշտություն չի էլ զգացվել:

Դեռ սրանք համեմատաբար հաճախակի ու լայն գործածություն ունեցող-ներին են: Կան նեղ մասնագիտական այնպիսի տերմիններ, որոնք համապա-տասխան իմաստներով դեռ պետք է յուրացվեն, և ապա հոգ տարվի նրանց հայերեն համարժեքների որոնման կամ ստեղծման մասին, ինչպես՝ լազեր, մազեր, մեզոն, վարիտրոն և այլն: Համոզված ենք, որ հետագայում, քրտնա-ջան աշխատանքի դեպքում, այդ կարգի շատ տերմինների համար ևս կարելի է ստեղծել հաջող կամ տանելի հայերեն համարժեքներ: Մի՞թե մի ժամանակ համանման վիճակում չեն եղել որոշ օտար անվանումներ, օրինակ, ասենք՝ ալգեբրա, տրիգոնոմետրիա, զեոմետրիա և այլն, որոնց դիմաց ստեղծվել են հանրաճանաչիվ, եռանկյունաչափություն, երկրաչափություն և շատ բնական են հնչում համապատասխան բնագավառներում:

Ի՞նչ պակաս տեղ գրավեցին լեզվաբանական նոր և նորագույն ճնշույր, գրույթ, ձևույթ, բառույթ, շարույթ, բաշխում, բաշխումնային, համաժամանա-կյա, տարժամանակյա և նման այլ տերմիններ, որպես ֆոնեմա, գրաֆեմա, մորֆեմա, լեֆեմա, դիստրիբուցիա, դիստրիբուտիվ, սինխրոնիկ, դիսխրոնիկ տերմինների համարժեքներ:

Առհասարակ այն, ինչ հնարավոր է ավելի հասկանալիով ու մատչելիով կամ ճշգրիտով փոխարինել և արտահայտել, ապա անպայմանորեն պետք է արտահայտել՝ լինի սովորական բառ, թե տերմին: Ինչո՞ւ չձգտել հասկանա-լիին: Միաժամանակ նշենք, որ այդ փոխարինումը կարող է լինել ինչպես թարգմանությամբ, նույնպես և արտահայտվող գաղափարին համապատաս-խան՝ մի ուրիշ բառի ստեղծումով, որը թեև օտար բառի տառացի վերարտա-դրությունը չէ, սակայն լավ է արտահայտում տվյալ առարկային, երևույթին և նմաններին վերաբերող հասկացությունը:

Հիշենք օրինակ, որ ոչ վաղ անցյալում մեր գրական լեզվում գործածու-թյուն ունեին ֆոյե, պարկ, պլյաժ, մարշրուտ, ռեյս, ռեյդ, ցեխ բառերը: Դրանց դիմաց ստեղծվեցին և գործածության մեջ մտան ճեմասրահ, զբոսայգի<sup>4</sup>, լս-դափ, երթուղի, ուղեբք, ստուգայց, արտադրամաս, որոնք ավելի մատչելի ու հասկանալի են: Միջին գրագիտություն ունեցող մարդը զբոսայգի ասելով ոչ մեծ դժվարությամբ կհասկանա ռեզոսանքի, զբոսանելու այգի», «այգի, որտեղ զբոսնում են», լոգափ ասելով կհասկանա ռջրի ափի այն մասը կամ այն ափը, որը հարմարեցված կամ հատկացված է լողանալու համար, կամ որի մոտ լո-ղանում են», ստուգայց՝ «ստուգման նպատակով կատարվող այց», «այց, որի ժամանակ այցելուներն ստուգում են կատարում» և այլն: Չենք վիճում, որ այդպիսի մարդը (հաճախ էլ ավելի պատրաստվածը) միշտ չէ, որ կարող է թեկուզ կազմությամբ վերլուծել իր իսկ գործածած բառերը, բայց մի՞թե պարզ չէ, որ նրա համար հասկանալին ու մատչելին դյուրություն է ստեղծում և այդ տեսակետից էլ նախընտրելի է:

Լավ քննություն բռնեցին ավանդույթ, միտումնավոր, մակնիշ, ճեռուստա-ցույց, ճեղովանավ և ուրիշ շատ կազմություններ՝ տրադիցիա-ի, տեղեյեմ-

<sup>4</sup> Այս բառը, ավելի ճիշտ, վերստեղծվել է:

ցիռզ-ի, մարկա-ի (գործարանային), տելեվիզոր-ի, տանկեր-ի հանդեպ: Հեռուստացույցն իր հետ բերեց նորապույն բառերի մի ամբողջ ընտանիք՝ հեռուստատեսություն, հեռուստակայան, հեռուստակենտրոն, հեռուսաադիտող, հեռուստաշափիչ, հեռուստաշափական և այլն...

Անշուշտ, լավ է, որ բնակչության մեջ լայն տարածում են գտնում վարորդ, կանգառ, տոմսավաճառ, կայաբան (ավելի վաղ կաղմված), սառնարան և նման այլ բազմաթիվ բառեր, երբ վարորդի ու շարքային միլիցիոնների համար սովորական են դառնում խաչմերուկ-ն ու վազանց-ը և այլն: Բայց վատ է, որ ոմանք երբեմն անտեսում են իրենց իսկ մայրենի լեզվի մեջ դարերով գոյություն ունեցող սովորական բառերը, աշխատանքային տերմինները և այլն: Էլ չենք խոսում այն քաղբենիների մասին, որոնք, թողած դարավոր շնորհակալություն-ը կամ շֆեդ-ը, շֆեդություն-ը, ասում են մերսի, շիկ և այլն:

Ուրեմն, նորակազմությունների գործածությամբ հանդերձ՝ չպետք է անտեսել և լեզվում եղած անհրաժեշտը:

Մենք չենք պնդում, թե բոլոր նորակազմություններն առհասարակ հաջող են լինում: Կան և անհաջող ու մերժելի կազմություններ: Դրանց բախտը ես որոշում է ժամանակը՝ մոռացության գիրկը տանելով:

Ասացինք, որ պետք է ստեղծել կամ գտնել ավելի հասկանալի, մատչելի, ճշգրիտ: Բայց դրանով «ուռա-փոփոխության» առաջարկ չենք անում: Կան ընդհանուր գործածություն ունեցող եկամուտ բառեր, որոնք այդպես էլ պետք է թողնվեն՝ որոշ պայմանների հաշվառումով: Այսպես օրինակ՝ ֆոֆ-ստրոտ բառը տառացի նշանակում է «աղվեսաքայլ», որքանով է նպատակահարմար այդպես թարգմանել ու գործածել: Կամ՝ վերմիշել-ը, որ գալիս է իտալերենից, ոչ ավել, ոչ պակաս «ճիճու, մանր որդ» նշանակող բառն է: Եթե կլինեն ոչ տառացի, բայց հաջող, հասկացությունները ճիշտ արտահայտող ուրիշ բառեր, ինչպես ասում են՝ խնդրեմ: Վերմիշել-ի համար թելաճայս-ը կամ թելախմոր-ը մեղանում արմատ չունեց: Բայց, օրինակ, սոսիսկի-ի համար նրբերշիկ-ը տարածում է գտնում:

Ձի կարելի թարգմանել կամ ուրիշներով փոխարինել տարբեր ժողովուրդների հասարակական կյանքի ու կենցաղի հետ սերտորեն կապված, յուրահատկություններ արտահայտող և միաժամանակ ուրիշ ժողովուրդների համար հայտնի ու գործածելի դարձած որոշ բառեր: Ինչպես, օրինակ, ուսերենի քաղաքական մեծ նշանակություն ստացած և համընդհանուր ճանաչում գտած բոլշևիկ-ը կամ սովխոզ-ը, ապա՝ ռուբլի-ն, կոպեկ-ը կամ էլ մոծիկ-ը, բորշչ-ը, շուստուշկա-ն, բիլինա-ն և այլն: Պահպանելով դրանք, իհարկե, հարմարեցնում ենք մեր արտասանությանը. չենք ասում բալշևիկ կամ բուբլ, կապե՛յկա և այլն:

Սովետական Միության մյուս ժողովուրդների լեզուներից որոշ ընդհանրություն են ստացել առանձին բառեր: Օրինակ՝ վրացական խոհանոցի առանձին ուտելիքների տարածման հետ տարածում են գտել և նրանց անունները, ինչպես՝ խսուշո, սածիլի կամ էլ պուրի-ն և այլն: Հայտնի են միջինասիական կեֆիր-ն ու կարակուլ-ը: Դրանք տեղ են գտել և հայերենում: Ինչպես որ զգալի տարածում են գտել ուրիշ ժողովուրդների մեջ մեր մածուն-ը, ջերմուկ-ը, լավաշ-ը և այլն: Մեր հարիսան ու ավանին գործածողը չի կարող չօգտվել նաև նրանց անուններից և այլն:

Նույնպես և պետք չէ թարգմանել, ասենք, իտալական զոնդուլ-ը, ամերիկյան դալար-ն ու վիսկի-ն, ճապոնական խաբակիրի-ն և այլն:

Չի կարելի անտեսել նաև այն երևույթը, երբ փոխառյալ բառը գործածվում է լեզվում եղած համապատասխան բառի հետ՝ դառնալով նրա հոմանիշը. ինչպես՝ վկայական և ատեստատ, նաշտրան և ռեստորան, գործողություն և ակտ, խնջույք և բանկետ և այլն: Այսպիսի զույգերի մեջ, անշուշտ, փոխառյալները գործածության ավելի նեղ սահմաններ ունեն, քան սեփականները:

Մեր այս համառոտ խոսքի վերջում, օգտվելով առիթից՝ ուզում ենք նշել նաև մի այլ երևույթի մասին: Նոր բառեր կազմելիս ու գործածելիս ոմանք երբեմն (թյուրիմացաբար կամ գուցե և նորի բունն ձգտումով) շրջանառության մեջ են դնում (կամ ցանկանում են դնել) այնպիսի կազմություններ, որոնց դիմաց լեզվի մեջ շատ վաղուց ընդունված ու սովորական դարձած բառեր կան: Օրինակ՝ տարիներ առաջ տերմինաբանական կոմիտեի քննարկմանն ու հաստատմանը ներկայացված մի բառացանկում կային կաթնապուր, բանապուր անվանումները: Այդ կազմությունների բաղադրիչ արմատները (կաթ. ապուր, բաց > բան), իհարկե, հայերեն հին արմատներն են և գալիս են նախագրային շրջանից: Բայց ինչու՞ կազմել ու մի կերպ անցկացնել կաթնապուր-ը, երբ ժողովուրդը գործածում է հիանալի բառ՝ կաթնով: Կամ ինչու՞ բանապուր, երբ ավելի տարածված է սպաս-ը (թեև որոշ տեղերում բանով էլ են գործածում): Իհարկե, ապուր-ը չպետք է ջնջել. դա շատ լավ համարժեք է սուպ-ի հանդեպ: Վերջին տարիներս մեր մամուլում իրեն զգալ է տալիս ստորգետնյա բառը: Բայց չէ՞ որ մենք ունենք ստորերկրյա բառը, որտեղ երկու հենց «գետին», «հող» է նշանակում (հմտ. երկրագործ, երկրագործություն և այլն): Հիմա էլ նորակազմ ջերմատուն-ն է ուզում դուրս մղել վաղուց հայտնի ջերմոց-ը: Ջերմատուն կազմությանը դեմ չենք, եթե չխափանի ջերմոց-ի գործածությունը, այլ մնա ռենդ-ջերմոց, տուն-ջերմոց իմաստով միայն (որպես ֆրանսերենից եկող օրանժերեա-ի համարժեք, ոչ ստուգաբանորեն), որին շատ համապատասխանում է, իսկ ջերմոց-ը մնա «հողի վրա ածուկների ձևով փորված և ապակե ծածկոցով փակված համարանք՝ բույսեր աճեցնելու համար» հայտնի նշանակությամբ:

Այս բոլորից հետո ընդգծենք, որ թեկուզ և շոշափված հարցերի շրջանակներում, մենք չէինք կարող այս համառոտ խոսքում սպառիչ քննություն կատարել և վերջնական լուծումներ առաջարկել: Այդ խոսքը ներկայացրինք խորհրդագծության կարգով: Այստեղ մեր արտահայտած կարծիքները գուցե և օգտակար լինեն այդ հարցերով զբաղվող գիտական օջախների ու առանձին մասնագետների համար: